

այլանդակ տողը: Այսպիսի աղճատումներ տեղի ունեցած են զժբախտաբար մեր մատենադարաններում գրութեանց օրինակութեան մէջ, որոնցմէ մին է նաեւ, ըստ իս, մեր խնդրոյ նիւթ եղող տողին «անընկալ» բառը:

Այս բոլոր ըսածներէս կ'եզրակացնեմ հետեւեալը: Քանի որ Ազաթանգեղոսի խմբագրողը՝ գրեթէ բառ առ բառ օրինակներ ու բանաբաղեր է կործինէն՝ այդ խնդրական տողին բոլոր նախորդ ու հետեւորդ հատուածները, ինչո՞ւ միայն յիշեալ տողը թողուցեր ու զանց ըրեր է, առանց ո՛ր է ակնարկ մ'ընելու կամ նման իմաստ մը դնելու՝ աւելի կամ նուազ փոփոխելով բառերը կամ շարադրութիւնը, ինչպէս սովոր է ընել միշտ: Այս կէտը ենթադրել կու տայ բնականաբար, թէ այդ քիչ մը մուծ է կասկածելի տողը հաւանօրէն գո-

յութիւն չունէր կորեան նախկին և հաւաքաւ գրութեան մէջ, և կամ, եթէ կար ինքն ալ մեզի պէս անոր բուն միտքը ըմբռնած չէ՛, որով անյարմար դատած և զանց ըրած է: Այս պարագային՝ ես ինծի թոյլ պիտի տայի կարդալ ու հասկնալ այդ տողը հետեւեալ կերպով. «Վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին (ձշմարտի)՝ զարքունիւն, շնորհ կաշկալ (փոխանակ անընկալ բառին) թողոյր, և երկիր պազեալ ծիրանափառ Օգոստականացն», եւն. այն է, «Ուստի, հաւանեցնելով (համոզելով) արքունիքը և ձեռք բերելով իր ճշմարտ խնդիրքը, շնորհակալութեամբ կը թողուր ու երկրպագելով ծիրանափառ Օգոստականներուն», եւն.: Ահա իմ համատ կարծիքս, մինչեւ որ լաւագոյն մեկնութիւն մը տրուի բանասէրներէն:

Հ. Յ. ԹՈՐՈՍԵԱՆ

## ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ս. ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Աւետիս միշտ աւետեաց արագ հնչումն.  
Ձի Տէրըն մեր յարեալ.  
Աւետիս հրաշաձայնեաց հրեշտակն.  
Տէր մեր յարեալ:

Այսօր Տէր յարեալ.  
Կանայք զի՞ լայք զկենդանին  
Աւետեաց պատգամս առնեմ.  
Ձի՛ արտասուս հեղոյք:

Շտապ շոյա ընթացեալ փութով  
Այսր անդր արշամամբ.  
Ո՛ր է իմ ծընեալ որդեակն.  
Այն հրաշածաղիկն:

Մի՞ դու պարտիզպան բարձեր  
Ձայն լուսոյ մարմինն.  
Ասա, ո՛ր եղիք զնա,  
Ձի ես երթեալ առից:

Ես երթեալ առից.  
Տարեալ թագուցից.  
Յայն ի հրեական մոլախումբ ժողովոյն:  
Քեզ քաղցրաձայնեալ ծանօթ

Առեալ Մարիամ,  
ԸզՏէրդ բաբունեան որդեակդ.  
Յոյժ կողկողանօք:

Ես եմ նոյն Յիսուս  
Ծընեալն ի քէն կուսութեամբ  
Եկեալ ի կոյս գերեզմանէն:

Մի՛ յիս մերձենար, լսէր.

Չեմ ելեալ առ հայր.

Չեմ ցուցեալ զվէր կողիցս. գտեղիս բեւեռաց՝

Ընդ իմ հետեւողի ի վեր ելէք.

Կենացունաբեր քարոզք.

Ընդ ձեզ եմ յաւիտեան:

Այս տաղը, ըստ 1241 ի ձեռագիր տաղարանին՝ Շնորհաւոյն է, ինչպէս կը վկայէ «Յիշատակարան զրէին» ձեռն տաղին վերջ գրուած այսպէս. — Քրիստոս Աստուած քո սուրբ չարչարանօք և սուրբ յարուստիք և թեամբ ողորմեա երգողի սոցա՝ տեսնոն Ներսիսի. և եղկելի զծողիս Յոհաննիսի. — Եւ իրօք, ո՛ր է կասկած չի մնար եթէ զայն բաղդատենք նոյն Ս. Հեղինային «Նոր ձայն աւետեաց» յարութեան տաղին հետ (տես «Յանք չափա», տպ. 1830, էջ 391-2). Կատարելագոյն նոյն են իմաստներն և ձևերը. և զիստեղ որ բնականաբար նոյն են իմաստներն և ձևերը. և զիստեղ որ Շնորհաւոյն այսպիսի կրկնութիւններ շատ ըրած է. համար. «Յիշատակարան» և Աւագ ուրբաթու երգերը եւն.: Այս տաղին համար 1348 ի օրինակ մը կը գտնուի «տաղ խորհրդային և քաղցր» առանց Շնորհաւոյն անուանի: Այդ օրինակին համեմատ աւելցուցինք նախադրելը՝ «տաղ տունը» «Ես եմ... զկրկնմանէն»:

## ՏԱՂ ԼԱՍՏԵԱՐԶՄԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ՝

Այն փոքրիկ հօտին տրամեալ.

Վտակս արտասուաց բխեալ:

Այն սակաւ զընդին,

Ողորմ աւաղիկ աղէտ.

Ջաշս ի վեր համբարձեալ յերկինս:

Որ ես հայր որբոց յուսով.

Ո՛ւմ յանձն արարեր ըզմեզ.

Տարակոյս բաժին է մեր:

Յիշեա յիշեա մի մոռանար.

Սէր խոստացար անսուտ բանիւ.

Ընդ մեզ լինել զաւուրս կենաց

Մինչ ի կատարած երկրի:



## ՏԱՂ ԵՍ. ԼՈՂԵՆ

ՅԱՆԴՐԻԱՍԷ՝

Այսօր պանծալի երգով զոչեմք և մեք  
Ի ձայն քաղցրութեան նրւագ.

Նախնեացն մեծաց առաքելոց զընդին՝

Նըմանող լիցուք յորդորական ըղձիւ:

Դասուց երկնայնոց հանդիսակից գոլով

Վարուք մաքրութեամբ հանդիպեսցուք տօնիս.

Բոպէից կազմիչ Հոգին Աստուած այսօր

Ի ձայն սաստկութեան հողմոյ հնչեաց յաշ-

խարհս:

Ի հրաձեւ տեսակ անուշահոտ բուրմամբ

Լըցան արարածք և սրբեցան վարուք.

Ահիւ տագնապեալ այլալեզու հրէիցն

ձեպով ընթացեալ ի վերնատունն սուրբ:

Սարսեալ դողային յօտարաձայն լեզուացն

Անտեղեակք եղեալ զմարգարէին առածն:  
Ի Հոգւոյն շարժեալ վէմն հաւատոյ այսօր  
Տարածեաց զուռկանն աստուածային բանին,  
Երբակի անձանց երիս հազարս որսաց:  
Երկիրս նոր երկին զարդարեցաւ այսօր  
Առ մեզ գալստեամբ ամենիմաստ Հոգւոյն  
Աստուածապետական նոր նորոգեաց զեղեալքս:  
Բաբունն ի բարձանց մինն ի յերից Հոգին,  
Յայտնեաց ըզխորհուրդս Հօր և Որդւոյ՝ մարդ-  
կան.

Մաքրեաց զարարածս ի դիւամոլ զոհիցն:  
Գոչմամբ ձայնակից ընտրեալ հօտին այսօր  
Լիցուք խմբակից եկեղեցւոյ մանկունք.  
Զփառս վերերգել Նրորողութեանն միշտ:

Հր. Հ. Ն. Փ.

1. Այս փոքրիկ և սիրուն տաղը շարքէն է անոնց որոնք հրատարակուած են Ս. Գր. Նարեկացւոյ «Մատենադարան»-ի մէջ (տպ. 1840), ինչպէս որ ունին 1241, 1348 ի և այլ զրեգիր տաղարանները, չեմ զիտեր ինչո՞ւ չորս թողուած է իր շարքէն: Զօպանեան զայս հրատարակած է «Հայ էջեր»-ուն մէջ (էջ 50) մեր Մտնդրի 1501 թիւ ձեռագրէն. մինչ ներկայ թ. 912 (գր. 1241 ին) և թ. 1288 (գր. 1348 ին) բաղդատութեամբ և տարբերութիւններով:

2. Տաղս՝ որուն սկզբնատառերը «Աղբիւսի երգ» կը կապեն՝ կը հրատարակենք մեր մատենադարանի տաղարանէ մը — գրուած 1348 ին: